Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
19.05.2015թ. թիվ 105-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

_____

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ակումբի **(այսուհետ՝ Ակումբ)** գործունեության կարգը:

1.2. Ակումբը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարմին կամ ստորաբաժանում (կառուցվածքային կամ առանձնացված) չի հանդիսանում:

1.3. Ակումբը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որի նպատակն է՝

ա) փաստաբաններին հետաքրքրող իրավական (ինչպես նաև՝ այլ) հարցերով կազմակերպել քննարկումներ, սեմինարներ, ինչպես նաև կարծիքների ու փորձի փոխանակմանը նպաստող այլ միջոցառումներ.

բ) վեր հանել փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, դրանց վերաբերյալ կազմակերպել քննարկումներ, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին կամ նախագահին ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ պատճառաբանված առաջարկներ.

գ) նպաստել փաստաբանների համագործակցությանը, փաստաբանների միջև գործընկերային, ինչպես նաև ոչ մասնագիտական շփումներին (կազմակերպել ոչ պաշտոնական հանդիպումներ),

դ) իրավական քարոզչության միջոցով նպաստել բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը,

ե) արդյունավետ կազմակերպել փաստաբանների ազատ ժամանակը և հանգիստը:

1.4. Ակումբը սույն կանոնակարգով սահմանված նպատակների

իրականացման համար կարող է փաստաբանների համար կազմակերպել քննարկումներ, սեմինարներ, կլոր սեղաններ և գիտական այլ միջոցառումներ, հեռուստահաղորդումներ, ինչպես նաև այլ միջոցառումներ:

1.5. Ակումբը գործում է ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում:

2. Ակումբի գործունեությունը

2.1. Ակումբը գործում է ազատ ռեժիմով:

2.2. Ակումբի համար անդամության պայման չի սահմանվում:

2.3. Ակումբն իր գործունեությունն իրականացնում է ըստ անհրաժեշտության հրավիրվող նիստերի միջոցով:

2.4. Յուրաքանչյուր փաստաբան, որի փաստաբանական գործունեության արտոնագիրի գործողությունը կասեցված չէ, կարող է Ակումբի քննարկման հարց առաջադրել՝ նշելով հետաքրքրող խնդիրը, ինչպես նաև խնդրի լուծման հիմնավորումները (առաջարկվող տեսակետ):

2.5. Ակումբում կազմակերպվող միջոցառումներին կարող են հրավիրվել իրավունքի՝ փաստաբան չհանդիսացող մասնագետները:

3. Ակումբի համակարգողը

3.1. Ակումբի աշխատանքները կազմակերպում է Ակումբի համակարգողը:

3.2. Ակումբի համակարգողը գործում է հասարակական հիմունքներով:

3.3. Ակումբի համակարգողը նշանակվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3.4. Ակումբի համակարգողը՝

ա) ապահովում է Ակումբի բնականոն գործունեությունը և կազմակերպում է Ակումբի նիստերը.

բ) զեկուցում է Ակումբի նիստում քննարկման դրված հարցերը, եթե տվյալ հարցի քննարկման համար նախապես այլ զեկուցող չի նշանակվել.

գ) կազմակերպում է Ակումբի գործավարությունը.

դ) կազմում և յուրաքանչյուր տարի դեկտեմբերի առաջին տասնօրյակում Պալատի նախագահին է ներկայացնում հաջորդ տարվա համար Ակումբի տարեկան ծախսերի նախահաշիվը.

ե) յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 15-ը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին է ներկայացնում հաշվետվություն՝ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված Ակումբի նիստերի և/կամ այլ միջոցառումների մասին.

զ) յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 25-ը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին է ներկայացնում տարեկան հաշվետվություն՝ տվյալ տարվա ընթացքում Ակումբի գործունեության մասին:

3.5. Ակումբի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսատնտեսական միջոցները տրամադրվում են ՀՀ փաստաբանների պալատի բյուջեից և/կամ համապատասխան գործընկեր կազմակերպությունների կողմից համագործակցության շրջանակներում տրված դրամաշնորհներից և/կամ այլ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եղանակներով

ստացված դրամական միջոցներից:

3.6. Իր աշխատանքերի արդյունավետ իրականացման նպատակով Ակումբի համակարգողը կարող է ներգրավել օգնականների, որոնք նույնպես գործում են հասարակական հիմունքներով:

3.7. Ակումբի համակարգողի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարել՝

- սեփական դիմումի հիման վրա.
- փաստաբանական գործունեության արտոնագիրի գործողությունը կասեցվելու կամ դադարեցվելու դեպքում.
- ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ից:

4.2. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ:

* * *